Աւարտեցին Յոյնք զչինութիւն տաճարին, զտեղիս իւրեանց յարդարեցին փառաւոր և շքեղ որպէս և կամեցան, իսկ զայլոցն թողին թերի և անշուք։ Եւ այսոքիկ են խափանեալ տեղիքն Հայոց, զորս ոչ կամեցան շինել. 3 սենեակ 'ի Վերնատունն և 'ի վերայ նոցա Պատրիարքարանն իւր պարագայիւք՝ որ ձգէր 'ի Վերնատանէ մինչեւ յորմն եկեղեցւոյն Ցունաց՝ որ անկանի 'ի վերայ Պատանատեղւոյն, և 'ի տեղի սենեկի Տեսչին արարին կրկնայարկ և զմի սենեակն խափանեցին, զսենեակն Եաղուպ ազային, և զմի սենեակ 'ի վերայ դերեզմանի Յովսեփայ յԱրեմաթացւոյն, և զայլ տեղիս զորոց ունիմք յիշել. ծեփեցին նաեւ զսուրբ Լուսաւորիչ եկեղեցին, թէպէտ Ջանացին Հայք արգելուլ զայն՝ այլ չեղեւ հնար։

Եւ 'ի տօնի Վերացման Խաչի կատարեցին զհանդէս նաւակատեաց եւ օծին զեկեղեցիս իւրեանց. կախեցին զկանթեղս 'ի վերայ Դերեզմանին Քրիստոսի (1810. 'ի 14 Սեպտեմբերի)։

Եւ Դատաւորն ազգ արար Հայոց 'ի ձեռն Դպրապետին իւրոյ, և խոստացաւ տալ կախել զպատկերս և զկանթեղս նոցին, համաձայն գրոց առաջին Դատաւորին և Բգեչխին, և յանձն առին Հայք, և ետուն 3500 դահեկան, և նա առաքեաց զգիրն և թոյլտուութեամբ Ցունաց կախեցին 6 կանթեղ 'ի վերայ Դերեզմանին Քրիստոսի. 4 'ի Հրեշտակի Վիմին՝ զոր Խաչէ կոչեն. 1 'ի վերայ դրան, և 1 'ի Պատանատեղն։ Յոյնք արգելին դնել զպատկեր Լուսաւորչին 'ի վերայ դրան Դերեզմանին, և չինել խաչկալ և պատկեր յիւղաբերից սեղանն՝ զոր չէին չինեալ, և կախել 4 կանթեղ 'ի շրջապատ որմն Դերեզմանին, և 1 'ի Պատանատեղին. և ասէին՝ հրովարտակն մեր եկեալ է, և ձերն եւս գրեալ 'ի նոյն միտ, 'ի հասանիլ նորին, որ ինչ գրեալն է՝ զայն թոյլ տամք, և զայլ ոչ ինչ. մոռացարուք զառաջինն՝ աւելի ոչ պատկեր՝ ոչ կանթեղ՝ ոչ սեղան իւղաբերից և ոչ պատարագ անդ այսուհետեւ։ Եւ 'ի ծանուցանելն Հայոց զայսոսիկ առ Դատաւորն, յետս եկաց և նա թէ ընդդէմ հրամանի չկարեմ առնել ինչ, և եթէ կամիք՝ ասց Իլամ, և 'ի դալստեան հրամանին անթերի կատարեմ զոր խնդրէքդ։ Ապա Դատաւորն գաղտագողի կատարէ